Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Բորիս Դեմիրխանյան,

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ,

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Դաքքա, հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար տնտեսական և սոցիալական հանձնաժողով:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ղեկավար կոմիտեի առաջին նիստին:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2017 թվականի նոյեմբերի 1-ից 2-ը Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության Դաքքա քաղաքում կայացել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ղեկավար կոմիտեի առաջին նիստը:

Գործարար համաժողովը իր ուշադրությունը կենտրոնացրել էր ՏՀՏ, էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային լուծումների, ինտերնետի և թվայնացման բնագավառներում

նորարարությունների ներմուծմանն ու ներթափանցմանն ուղղված ծրագրերի իրականացման, ինչպես նաև ֆինանսական աջակցության ներգրավման վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստի հիմնական նպատակը տեղեկատվական գերմայրուղու կառուցումն է՝ քննարկվել և մշակվել են Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տեղեկատվական գերմայրուղու ծրագրի իրականացմանը և գերմայրուղու միջոցով Եվրոպան և Ասիային իրար կապակցելու գաղափարին ուղղված մի շարք բանաձևեր:

Գերմայրուղու ծրագիրը կյանքի կոչելու նպատակով քննարկվել են մի շարք գաղափարներ. մասնավորապես նիստի ընթացքում որոշվել է տարածաշրջանի համար ստեղծել հետազոտական և զարգացման ակադեմիական ցանց, որը թույլ կտա գիտելիքը օգտագործել թվային փոխակերպման ձևավորման նպատակով: Այսպիսի ակադեմիական ցանցը կարող է լուրջ հարթակ հանդիսանալ տեղեկատվական գերմայրուղու ձևավորման, տարածաշրջանի զարգացման և տեղեկատվության փոխանակման տեսանկյունից: Հայկական կողմը հավանություն է տվել այս գաղափարին և պատրաստակամություն է հայտնել ակտիվ մասնակցություն ցուցաբերել այսպիսի ակադեմիական ցանցի ստեղծման աշխատանքներին:

Տեղեկատվական գերմայրուղու ձևավորմանն ուղղված մյուս կարևոր գաղափարն էր մալուխային ցանցերի միացումների ապահովումը, որոնք կկապեն Ասիան Եվրոպայի հետ: Առաջարկվել է դիտարկել այս գաղափարը իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, դրանցից ելնելով կատարել մալուխային միացումներ այն հատվածներում, որտեղ դրանք բացակայում են և լրացնել այն հատվածներում, որտեղ միացումները ոչ լիարժեք են, հին են կամ մաշված:

Իսկզբանե, ուշադրությունը կենտրոնացված էր հիմնականում ծովային մալուխների անցկացման վրա, սակայն, հայկական կողմը առաջարկություն ներկայացրեց դիտարկել ենթակառուցվածքային մի ամբողջ համալիր ծրագիր, որը իր մեջ կընդգրկի ոչ միայն ծովային, այլ բոլոր ճանապարհներով մալուխային ցանցի անցկացումը:

Հանդիպման ընթացքում ակտիվ քննարկումներ են տեղի ունեցել նաև լայնաշերտ ինտերնետի ծավալների մեծացման հետ կապված խնդիրների և դրանց հնարավոր լուծումների շուրջ: ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը առաջարկել է լուծումներ որոնելիս կենտրոնանալ ոչ թե բնակչության

մարդաքանակի վրա, այլ դիտարկել օգտատերերի կողմից առավել շատ պահանջարկ ունեցող ծառայությունները: Դրա համար անհրաժեշտ է մշակել մի ցանկ, որում հաշվարկված և ընդգրկված կլինեն բնակչության կողմից առավել պահանջարկ ունեցող ծառայությունները: Վերոնշյալ լուծումը կկայանա նրանում, որ ըստ այս ծառայությունների պահանջարկի կձևավորվի նաև տարածաշրջանի համար անհրաժեշտ ինտերնետի ծավալները:

Այս մեխանիզմը թույլ կտա նաև առավելապես կրճատել ծախսերը:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Համաժողովի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը երկկողմ հանդիպում է ունեցել Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության փոստի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Զունաիդ Ահմեդ Պալակի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՏՀՏ, թվային ենթակառուցվածքների ոլորտների զարգացման հեռանկարներին առնչվող երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, դիտարկվել են նաև երկու երկրների միջև համագործակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում փոխըմբռման հուշագիր կնքել Հայաստանի Հանրապետության և Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության միջև: Բանգլադեշյան կողմը խոստացել է մոտակա ժամանակներս մշակել հուշագրի նախագիծը և համաձայնության ներկայացնել հայկական կողմին:

Նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը հանդիպել է նաև ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար տնտեսական և սոցիալական հանձնաժողովի գործադիր փոխքարտուղար Հոնգջու Համի հետ և քննարկել Հայաստանի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար տնտեսական և սոցիալական հանձնաժողովի հետագա համագործակցության հնարավորություններն ու անհրաժեշտությունը: Հոնգջու Համը նշել է, որ ակնկալում է Հայաստանի ակտիվ մասնակցությունը նաև հետագա հանդիպումներին և նիստերին:

Երկկողմ հանդիպում է տեղի ունեցել նաև Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներդրման գլխավոր մասնագետ Կարլոս Կացույաի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է

գյուղական համայնքների համար լայնաշերտ ինտերնետի ծրագրի մշակման և այն կյանքի կոչելու անհրաժեշտությունը, ինչպես նաև տարածաշրջանային տվյալների կենտրոնների ստեղծման հարցը, որը թույլ կտա նաև երկու երկրների ՏՀՏ ոլորտի մասնագետների միջև գիտելիքների և փորձի փոխանակում իրականացնել:

Նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը և Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետության փոստի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Զունաիդ Ահմեդ Պալակը հանդիպում են ունեցել Քսում կորպորացիայի բիզնես զարգացման տնօրեն Լայն Ալիսոնի հետ, որը հանդիսանում է Փեյփալ ընկերության գործընկերը: Լայն Ալիսոնի հետ քննարկվել է այնպիսի մի ծրագրի մշակման հնարավորությունը, որը թույլ կտա Փեյփալ համագարգին մուտք գործել փոքր բնակչություն ունեցքղ երկրներ, որոնց թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բորիս Դեմիրխանյան

07.11.2017թ.